

Նամկ հանել տրամաբանութեամբ։ Ալլոց մէ ու մանկ իր ազատ կամքով տնօրինած է (Մարդկութիւն, և անոր արդիւնք բոլոր Ս. խորհուրդները), ունանի ալ իր էութենէն կը բժիին և ամեն մարդանատի մարփին և սրտին մէջ անեղանելի կերպով տողորուած են։ Ուրեմն ինչպէս կարելի է որ ասոնկ փոփոխութիւն կրեն։ գիտութիւնը, աստուածաբանական և իմաստասիրական գիտութիւնը՝ կը ծառայէ միայն լուսաբանելու այդ հաւատալիքները և ցոյց տալու թէ չեն կարող հակասել մարդկային բանին, ուրիշ ոչինչ։ — Մարդ եթէ կարենար փոփոխել զանոնք և իր գիտութեամբ նոր հաւատալիքներ ստեղծել, կամ գիտութեան հետ կրօնքն ալ յառաջանել, «արդիացնել», այն օրէն ինքն իր Աստուածը պիտի ըլլար։

Իրը վերջաբան՝ լաւ է յիշեցնել «Դաֆն յի՞ իրեն իսկ համայնքին ուղղած խօսքեր»։ «Քննմը, «Գրասեպաններ, օրաբերը՝ ինչպէս անհամի մը՝ «նոյնպէս ալ ազգի մը բարձրացմանը կամ ան՝ «կումին պատճառ կ'ըլլան... որոնք միայն բարին, զեղեցկին, ճշմարտին ու վսեմին ցոլա-

« բաններն ու արձագանգները պարտին ըլլալ՝ « ու ոչ թէ չարին, ոգեղին, կեղծիքին ու սու- « տին նեխած թոյներն ու եղենական դարբնոց- « ները...»

« Քնարողեկ, դասախոսելի, հրապարակա- « գրեկի լառաջ՝ վայրկեան մը կանգ առնել ու « խորհիլ թէ ինչ է քարոզածդ, խօսած ու « գրածդ և որոնց ուղղուած...» Զգնյշ, զգոյշ. « ձեր կայսնած տեղը սուրբ է...»

« Սոսկ անհատի մը հետ չէ որ գործ ունիք, — « և կեկդցականներ, ուսուցիչներ, հրապարա- « կապիքներ՝ այլ համայնքի մը հետ, սոնկ ներ- « կային համար չէ՝ այլ պապային... Գրչէդ « և սպադա մէկ խօսք, մէկ բառ... արձակուած « նեստ մըն է՛ որ ալ ետ չի գառնար։ Մէկ կա- « թիլ բոյն, սոսկ մէկ կաթիլ կամ վայրկեանա- « պէս կը մեղոցնէ և կամ, աւելի ցաւալին է — « մինչև կեանիքը վերը մարմարոց որուէ մէկ « մասը կ'անգամալուծէ...»։

(Գրափենի էջ 29-30)

Հ. Գ. ՌԱՍԻԱ

## ՄԱՀ ԼՈՐՏ ՊՐԱՅԱՒՐ

### ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿ ՄԲ

Չը կարելի առանց խոր կոկիծի և յուզման կարգալ հնագիրը, որ կը գոտչէր մնանաւն Հայուսէր գերկան ձէյս Պրայսի դառնայէտ մահ։ Այս հոյակազ գէմքով մեր ազգը կորունցոց Հայ դատին էն անխոնչ և անընկնծ փառաբանն ու ախոյնան։ Օտար ծնաւ ան, բայց ապրեցաւ ու գործեց աներկիր և աննկուն Հայ թշուափն ի նպաստ։ Իր եզական ու գործօն համակրութիւնը այլան հուծկու էր՝ որ զինքը տարաւ հանեց մինչև Ալրաբար նուիրական զագաթը, հոն Հայութեան զեղաստեխ հըմագներով արբենալու և պայքարելու գրչով ու ձայնով՝ բազմաչար ազգի մը ազտապրումին՝ մինչև իր վերջին շունչը։

Կը կարգանք այս մասին բիւզանդ Գէշեանի յօդուածին մէջ սա հետաքրքրական տոքերը։ « Արտաշար զավայի պարհամի մը, նոյն օրն իսկ ուր հետազիր իր մահուան գոյշը կը բերէր մեզ, իր հասնելի լուսունի քրիքեր, հեարագորդ ամսույ 18ին լուսունի թինկ շօրմ արակին՝

մէջ, ի նպաստ հայկական դատին տեղի ու ենցած գումարում մը, որ կարդացուած է ենոյի ինքն Լորու Պրայսի Նամակը, որով կը յայտարակ, թէ ժամանակի համար է որ ան- զիիիշ ժողովուրդը գործնականագին ցոյց տայ իր կարեկցուրիներ Հայոց և աս համարակ Ալեկըի Վրիտանունէց կրած տասապանքնեն- րուն համար։ « Անոնք սպաննուեցան և զեռ կ'սպաննուին այն պատճառակ միայն որ քրիու- տոննայ էին»։ Լորու Պրայսի այս համակը նուա իր կոտակը այն մէժ ազգին ուղղուած, որուն այնքան երկար տարիներ ժամացած էր իր նկարագրին ազնուուրիսն հաւասար իմա- ցական բարձր արժանիքով մը»։

Հաւեկանութենէն զուրկ պիտի չըլլայ դնել սուորն թարգմանութիւնը ձէյս Պրայսի մէկ գրոյն, զոր ինք ուղղակի գրկած էր սարիներ առաջ Ալանայի որբերուն նուիրուած 1909ի Գիշումին համար, և զոր դժբախտ արկած մը ցարդ անտիպ թողած էր։ ԽՄԲ.

### Պատուարժութեան Մխիթարեան Հայոցը

Հանոյքը կ'իմանամ թէ միջոցներ ձեռց  
կ'առնէք Եւրոպայի տեղեկացնելու համար  
ողբալի վիճակը այրիներուն և որբերուն,  
որոնք անցեալ զարնան սոսկալի դէպ-  
քերուն հետևանքով, ներկայիս՝ անտէր  
անտէրունչ լքուած են կիլիկիոյ և հիւսի-  
սային Սուրբոյ մէջ, ու ձեր փափաքին  
համաձայն, լիայօժար կը զրկեմ ձեզ այս  
քանի մը տողերս:

Մարգակային ոչ մէկ համախմբութիւն  
այնքան աշխատեր է հետախուզել ու ծա-  
նօթացնել Հայոց Ազգին Պատութիւնը,  
որբան ըրած է վանեստիկի Մխիթարեան  
Տունը իր յարատև ջանքերով և հմտու-  
թեամբ: Այսու հանդերձ, նոյն իսկ ներ-  
կային, Եւրոպա լիովին տեղեակ չէ թէ  
որբան հետաքրքրական ու որբան այլա-  
զան կերպերով երևելի են Հայաստանի  
Տարեգիրները, և թէ որբան ամենափայ-  
լուն հանճարի մարդիկ արտադրեր է ան:  
Հայ ժողովուրդը, ի բաց առեալ Զինա-  
ցիներն ու Ճարուացիները, աշխարհին ո-  
և է կողմ զսնուող ժողովուրդներու մէջ  
հնագոյնն է որ տակաւին կը զրաէ իր  
ծագումին բնաշխարհը: Հին Երրայեցի մար-  
գարէից և Աստրենտանեաց Թագաւորներու  
օրով՝ Հայաստան արդէն իսկ գոյութիւն  
անէր, և իր անունը մենց կը կարդանց  
հին կտակարանի մէջ: Երկու երեք զար  
վերջ՝ Հերոդոտոս կը յիշատակէ Հայերը:  
Խակ աւելի ուշ, Պոմպէոս զօրավարին օրով,  
Տիգրան՝ զոր Հռովմայեցից կը կոշէին  
Տիգրանէս՝ հաստատեր էր Հայկական  
զօրատոր թագաւորութիւն մը, որ իրեն  
հպատակեցոց բոլոր շրջակայ երկիրները.  
և այդ ժամանակէն ի վեր, Հայաստան  
կարեոր զեր մը կը խաղայ իրը ընդհան-  
րապէս դաշնակից Հռովմի՝ ընդդէմ Պար-  
թևաց ու յետոյ ընդդէմ Պարսից թագա-  
ւորներուն: Երրորդ զարուն վերջերը,  
Հայաստան՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի քա-  
րոզութեամբ՝ ընդունեցաւ քրիստոնեայ  
հաւատքը և եղաւ առաջին աշխարհը ուր  
Քրիստոնէութիւնը ճանչցուած էր իրը


ազգային կրօն: Այնուհետև Հայերը Քրիս-  
տոնէութեան պատուար կանգնեցան ընդ-  
դէմ կրակապաշտ Պարսից, ու երբ Մահ-  
մետականներէն նուանուեցան, պատուար  
կանգնեցան նաև ընդդէմ Դամասկոսի և  
Պաղտատի խալիֆայից հպատակներուն:  
Կոստանդնուպոլսոյ Ալքելեան Հռովմէա-  
կան կայսրութեան ամենէն քաջակորով  
զինուորներէն ու ճարտարամիտ վարիչ-  
ներէն շատեր Հայ էին ծագումով, և ա-  
մենէն համրաւաւոր կայսրներէն ոմանց  
մի և նոյն կորովի ցեղին կը պատկա-  
նէին:

Ոչ նուազ հետաքրքրական է Հայ ազ-  
գին վերջին դարերու տիպու ու աղետալի  
պատութիւնն ալ, թէ և այս շրջանին  
մէջ, ինչպէս առաջ, չտեսնուին արութեան  
և կրօնական հաստատամտութեան վեհ ու  
բազմաթիւ օրինակներ:

Այն օրէն ի վեր՝ երեսուն տարիներ  
առաջ՝ երր ճանապարհորդեցի Հիւսիսային  
Հայաստանի մէջ, եւայ Մասիս լեռը ու  
այցելեցի Լջմիածնի պատկառելի սրբա-  
վայրը. ես միշտ ջերմ փափարող մը եղած  
եմ որ բանիրուն զրաքէտ մը անզիկերէն  
կամ ֆրանսերէն լեզուով զրէլ Հայաստանի  
պատութիւնը մինչև մեր օրերը, սկսելով  
այն հնագոյն ժամանակներէն, երբ բևե-  
ռագիրները ցանդակուած էին վանայ բեր-  
գին պարիսպներուն վրայ, և ասի պիտի  
ըլլար հոյակապ գործ մը: Ու ներկային  
կ'ապրին ոչ սակաւ Հայ զրագէտներ որ  
կարող են արտադրել սոյնորինակ աշխա-  
տութիւն մը: Երր այդ գործին ճենար-  
կուի, յուսանց որ վերջին գլուխին մէջ  
արձանագրուի թէ Հայ ժողովուրդին  
վրայ պայծառագոյն օրուան մը ծագումը  
մօտ է, և թէ Հայոց կորովն ու տաղանդը,  
որոնք երկար զարերու ընթացքին մէջ  
երկան եկան այնքան բազմազան եղա-  
նակներով, հուսկ այժմ, Աստուածային  
օրհնութեամբ, պիտի ունենան պատեհու-  
թիւնը, վերանորոգող խաղաղութեան միջո-  
ցին, իրենց ջանքերով բարգաւաճել իրենց  
բնագաւառները:

Այս է ահա եռանդուն բաղձանցը ա-

Նոնց, որոնց ճանչցած են Հայ Եկեղեցոյն իցիւ թէ Ամենակարողն Աստուած Ա-  
ֆրիստոնէութեան մատուցած միծ ծառայու բևելցի վրայ ծագէր հաշտութեան և խա-



*James Bryce*

թիւնները, ինչպէս նաև Հայ ցեղին ցոյց դադութեան նոր թուական մը:  
տուած բազմապիսի կարողութիւնները:

Թարգմ. \* \* \*